

արժանի է Կիլիկիայի կաթողիկոսական պատմական գահին, Նա դեռ քառասուններինը տարեկան է. ծնունդ է Ռումինիայի Խամախլա քաղաքում 1852 թ. և եպիսկոպոս ձեռնադրուել սուրբ Էջմիածնում, վեհափառ Հայրեկի ձեռքով 1898-ին, Ձեռնադրութիւնից առաջ վեհափառ կաթողիկոսի հետ ճանապարհորդեց դէպի Թիֆլիզ, Բաղու և ամեն տեղ սիրալիր ընդունելութիւն էր դտնում, իբրև զարգացած, ճարտասան և եւրոպական լեզուներ իմացող հոգևորական անձն:

Ծնորհաւորելով Սրբազանի բարձր և պատասխանատու նոր կոչումը՝ լիալուս ենք, որ նա կարգարացնի Կիլիկիայի հալ որբացած ժողովրդի լոյսերը և իւր կաթողիկոսութեամբ լուսաւոր գաղափարներ առաջ մղելով՝ կբաղմացնէ Կիլիկիայի դպրոցական հաստատութիւնների թիւը և ամենալն եռանդով կնպաստէ ժողովրդի տնտեսական դրութեան բարւոքման, Կիլիկիան Եւրոպային մօտ լինելով՝ ամեն լարմարութիւն ունի ընդունելու եւրոպական քաղաքակրթութեան օգտակար կողմերը. հարկաւոր է միայն եռանդ և անձնուէր գործունէութիւն:

ՌԵԹԷՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

1901 թ. Հոկտեմբերի 28-ին փառահեղ հանդիսով տօնուեց Կ. Պօլսի Պէրպէրեան մասնաւոր միջնակարգ դպրոցի հիմնարկութեան 25 ամեալ տարեդարձը: Ահա մի արտաքուց կարգի երևութ. ամբողջ տաճկահայերի պատրիարքարանը, ազգային վարչական հիմնարկութիւնները ձեռք ձեռքի տուած հալ մամուլի բոլոր ներկայացուցիչների հետ՝ տօնում են մի հռետւոր անհատի հռետւոր Գրդշի 25 ամեալ տարեդարձը: Ըօքեւեանի հանդէսն սկսւում է եկեղեցում. հանդիսաւոր պատարագ է լինում՝ Սրբազան պատրիարքը մի ամբողջ ժամ քաբող է խօսում, Պէրպէրեան դպրոցի և նրա հիմնադրի ազգին տուած օգուտները թոււ և դրուատում: Այնուհետև հանդէսը շարունակւում է դպրոցի դաշինքում, ուր հաւաքուած են լինում Կ. Պօլսի հոգևոր և աշխարհական գործիչները, նոյն իսկ չունաց պատրիարքարանի ներկայացուցիչը և ամենքը միաբերան փառաբանում են դպրոցն ու հիմնադրին: Բաղմաթիւ նուէրներ է ստանում հիմնադիրը և դրամական նպաստը

հասնում է 1098 օսմանեան ռոկու. զգացուած լօբելիարն էլ ալդ գումարից 100 ոսկի «ուսուցչաց նպաստից սնտուկին» է լատկացնում, 30 ոսկի «վանալ Երամեան վարժարանին», 20 ոսկի էլ Մ. Մամուրեանի լիշատակին արձան կանգնեցնելու համար:

Այս տոնախմբութիւնը մենք մի արտաքոյ կարգի երեւոյթ անուանեցինք, որովհետեւ սովորաբար մասնաւոր անհատի, մասնաւոր հիմնարկութեան տարեգարծը մասնաւոր շրջանումն է տօնուում, իսկ Պէրպէրեան զպրոցի տարեգարծը տօնուում է իբրեւ աղգալին հիմնարկութեան լօբելեան: Ինչո՞ւ Որովհետեւ նախ՝ ալդ մասնաւոր զպրոցը անպիսի տաղանդաւոր մարդու ձեռքով է ղեկավարուել, անպիսի զաղափարներ է ներշնչել իւր պատերի մէջ սովորողներին, որ սոքա վերջն իրանց հասարակական գործունէութեամբ օգտակար են հանդիսացել աղգին և զպրոցի անունը բարձրացրել: Երկրորդ՝ զպրոցի տէրը միմիայն ալդ հաստատութիւնը ղեկավարելով չէ բաւականացել, այլ իւր գրական և մանկավարժական գործունէութեամբ մեծ դեր է խաղացել Տաեկահալոց զպրոցական գործի կազմակերպութեան և լաւաջաղիմութեան վերաբերմամբ՝ «ուսումնական խորհրդի» ամենափորձուած և ամենաեռանդուն անդամներից մէկը լինելով:

Ռեթէոս Պէրպէրեանի գրական գործունէութիւնն սկսւում է 1870-ից էլ առաջ. նա գրում է Կ. Պօլսի թերթի, գրական հանդէսների մէջ, դասախօսութիւններ է կարդում և ձեռք բերած գիտութեան պաշարն անպիսի բանաստեղծական ու գրաւիչ լեզուով է արտայայտում, որ ընթերցողի կամ լսողի վրայ հիանալի տպաւորութիւն են թողնում: 1871-ին նա հրատարակում է Լամբնէի «Բանք հաւատացելու ուրուք», 1880-ին «Առաջին տերեւը», 1883-ին Գէօթէի «Հէրման և Դորոդէտ» և «Վաղաքական տնտեսութիւնը», 1885-ին «Մարդիկ և իրք», 1886-ին «Ժողովրդեան զբօսանքները», «Դրամը», 1886-ին «Երկու բանախօսութիւնք» և այս տարի լօբելեանական «Կաստիարակի մը խօսքերը»:

Պէրպէրեանը թէ իբրեւ անհատ—մարդ, թէ իբրեւ աղգալին՝ հասարակական գործիչ—չառ համակերելի կողմեր ունի և ըստ ամենայնի արժանի է այն գովեստից ու բարոյական և նւթական վարձատրութեան, որ լօբելեանի աւելիով ստացաւ իւր երախտադէտ հալրենակիցներից:

Մեր կողմից շնորհաւորելով նորա քսանհինգամեայ վաստակաւոր և արդիւնալի գործունէութիւնը՝ մաղթում ենք, որ նա նոյն եռանդով շարունակէ աշխատել լոգուտ տոհմային դաստիարակութեան:

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ Ս. ԼՈՒՍ. ԱԶԴ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԻՒ- ՐԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

Մենք ստացել ենք լիշեալ հիւանդանոցի հարիւրամեայ յօբելեանի տեղեկագիրը (1801—1901):

Զմիւռնիայի ազգային հիւանդանոցը թէպէտ որպէս աղքատանոց գոլութիւն է ունեցել 18-րդ դարու կէսից չեալ, սակայն հիւանդանոցի է փոխուել 1801 թուին, որի նախակառուցման մարմարէ լիշատակարանը գտնուել է վերաշինութեան ժամանակ 1879 թուին:

Հիւանդանոցը իւր աւելի քան միդարեալ գոլութեան ընթացքում եղել է իսկապէս իբրև գթասիրական մի հիմնարկութիւն, պատասպարելով և դարմանելով հալ և օտար հիւանդաներ ու կարօտեալներ, իսկ 1877 թուից, երբ Զմիւռնիայի առաջնորդ ընտրուեցաւ գեր. Տ. Մելքիսեդէկ վ. Մուրաթեանց, վերջինիս բարոյական ազդեցութեան շնորհիւ և բարեխառակ Սպարթալեան եղբայրների առատաձեռնութեամբ նոր զարկ ստացաւ ալդ հիմնարկութիւնը, մի հոլակապ չէնք կանգնեց և գործը աւելի հաստատ հիմքերի վերայ դրուեց: Հիւանդանոցը հետզհետէ ապահովուեց բարերարների նուիրած կամ կտակած հաստատուն կալուածներով, և այսօր հիւանդանոցի վերայ ծախս է լինում մօտ 12.000 ուրլի տարեկան, որ սակայն ամենայն խնայողութեամբ վարուելով իսկ անբաւական է հաստատութեան մեծ կարիքները հոգալու:

Հիւանդանոցի 600 ամեայ յօբելեանը տօնելու, ինչպէս նաև կամաւոր հանգանակութեամբ ալդ մեծ հիմնարկութիւնը կատարելապէս ապահովելու համար Զմիւռնիայում կազմուած է մի լանձնաժողով տեղոյն առաջնորդ Ամեն. ա. Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրաթեանի նախագահութեամբ:

Յօբելեանը կատարուելու է տարւոյս մարտ 31-ին ս. Լուսաւորչի տօնին լաջորդող կիւրակի օրը:

Շնորհաւորելով հիւանդանոցի տօնը, խմբագրութիւնս լոյս